ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

16.05.2017 13:51

2017թ. մայիսի 12-ից 13-ը ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորած պատվիրակությունը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում մասնակցել է Վրաստանի փաստաբանների միության կողմից կազմակերպված երկրորդ միջազգային գիտաժողովին:

Գիտաժողովի հիմնական ուղղվածությունը ժամանակակից փաստաբանության մարտահրավերների քննարկումն էր:

Գիտաժողովի բացմանը մասնակցել են նաև Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլին և Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

Գիտաժողովին բացման խոսքերով հանդես են եկել մասնակցող փաստաբանական կառույցների ղեկավարները:

Բացմանը ողջույնի խոսքով հանդես գալով՝ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը կարևորել է նման միջոցառումների իրականացումը՝ նշելով, որ դրանք ամրացնում են մասնակից երկրների միջև մասնագիտական համագործակցությունը և նպաստում լավագույն փորձի փոխանակմանը:

Գիտաժողովը բաղկացած է եղել մի քանի մասերից, որոնցից յուրաքանչյուրում հանդես են եկել ԱՊՀ և Բալթյան երկրների պատվիրակները: Հիմնականում քննարկվել են իրավական գործունեության երաշխավորություններին ու առանձնահատկություններին, փաստաբանության միջազգային երաշխիքներին, փաստաբաններին պաշտպանող փաստաբանության յուրահատկություններին, իրավաբանների անդրսահմանային ներկայացուցչությանն ու համագործակցությանը վերաբերող հարցեր: Քննարկվել է նաև սոցիալական կայքերի և մեդիայի ազդեցությունը փաստաբանի մասնագիտության և տվյալների պաշտպանության գործում:

Արա Զոհրաբյանը գործընկերներին է ներկայացրել «Փաստաբանի կարգավիճակի ձեռքբերման ընթացակարգը և մասնագիտական կրթության չափորոշիչները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով զեկույցը: Զեկույցի հիմքում ՀՀ փաստաբանական դպրոցի կազմավորման, դպրոցի դասընթացների կազմակերպման և միջազգային փորձի վրա հիմնված կրթական ծրագրային առանձնահատկություններն են եղել:

Գիտաժողովին ծավալված քննարկման արդյունքում մասնակից երկրների պատվիրակները բարձր են գնահատել Հայաստանի փաստաբանական համայնքի և փաստաբանական դպրոցի ներկա վիճակը՝ ընդգծելով դրանց ինստիտուցիոնալ առավելությունները:

Պայմանավորվածություններ են ձեռք բերվել Հայաստանի այդ կառույցների մեր մասնագետների միջոցով դրական փորձի տեղակայման հետագա գործնական քայլեր իրականացնել ԱՊՀ մի շարք երկրների համար:

ՀՀ ՓՊ պատվիրակության կազմում էին խորհրդի անդամներ Կարեն Սարդարյանը, Հարություն Հարությունյանը, ինչպես նաև՝ ՓՊ նախագահի տեղակալ Արթուր Դավթյանը:

EXIT
The European Union for Georgia
USAID
FROM THE AMERICAN PEOPLE
EAST-WEST MANAGEMENT INSTITUTE
Georgian Bar Association 2nd International Conference
Summit of Bars of Georgia, Baltic and CIS Countries
MODERN CHALLENGES OF LEGAL PROFESSION

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })